Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 37

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. փետրվարի 3-ին ժամը 14:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի

	փոխնախագահ
Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Նիստին մասնակցում էին նաև.

Մարի Յովանովիչը	ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան
Քրիսթոֆեր Դաննը	«Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի իրավախորհրդատու, Վաշինգտոն
Մայք Մաքենթայրը	«Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գնումների գծով տնօրեն, Վաշինգտոն
Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ
Վահե Մկրտչյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Տեխնիկական վերահսկողության իրականացման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի աուդիտի պլանի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի երկրորդ փուլի իրականացման նպատակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և «Վարկային ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցի քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի գնումների պլանի փոփոխության քննարկում և հաստատում:
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում շինարարական աշխատանքներն ավարտված և շահագործման հանձնված ճանապարհահատվածների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
6. Այլ հարցեր՝

ա/ «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-08/001 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց, որ Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի շրջանակներում 6 մայր ջրանցքների վերականգնման աշխատանքների Առաջին փաթեթով նախատեսված շինարարական աշխատանքներն արդեն իսկ սկսվել են և ՀՄՀ-Հայաստանի համար շատ կարևոր է վերահսկող կազմակերպության՝ հնարավորինս շուտ ներգրավման հարցը: Ներկայացվեց նաև, որ պայմանագրի գումարն ավել է բյուջեով կանխատեսված թվից (2,967,380 ԱՄՆ դոլար՝ ֆինանսական պլանով նախատեսված 2,771,500 ԱՄՆ դոլարի դիմաց):

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե այդ ավել գումարն ի՞նչ միջոցներից է ծածկվելու:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգման ենթակառուցվածքներ բաղադրիչում առկա են միջոցներ չնախատեսված ծախսերի ծածկման համար: Բացի այդ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը հիմնավոր է համարում տվյալ գումարի վճարումը, քանի որ ընկերությունը շինարարական աշխատանքների կատարման գործում ներգրավել է մեծ թվով միջազգային մասնագետների, որոնց ներգրավվածությունը կարևոր է և՛ աշխատանքները բարձր որակով իրականացնելու համար, և՛ փորձի փոխանակության տեսանկյունից:

ՀՀ Վարչապետը հետաքրքրվեց, թե տվյալ պայմանագրի գումարն ամբողջ Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի համար նախատեսված գումարի քանի՞ տոկոսն է կազմում:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ընդհանուր Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի Ոռոգման ենթակառուցվածքներ բաղադրիչի իրականացման համար նախատեսված է մոտ 110 մլն. ԱՄՆ դոլար, հետևաբար այս պայմանագիրը կազմում է ծրագրի մոտ 3%-ը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ի՞նչ կլինի այս պայմանագրի ճակատագիրը և որտեղի՞ց կկատարվեն վճարումները, եթե ՀՄԿ-ն դադարեցնի հատկացումները:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ նմանատիպ իրավիճակում ՀՄՀ-Հայաստանի կողմից կնքված ցանկացած պայմանագիր կդադարեցվի և վճարումներ կկատարվեն միայն արդեն իսկ մատուցված ծառայությունների կամ կատարված աշխատանքների համար:

Ներսես Երիցյանը մեջբերեց, որ հաշվի առնելով, որ տվյալ հանձնարարականը կատարվելու է համատեղ գերմանական և հայկական կոնսորցիումի կողմից, ուստի անհրաժեշտ է պայմանագրում ամրագրել, որ հայ և գերմանացի մասնագետները տեղում ևս կաշխատեն համատեղ, որը լավ հնարավորություն կլինի արևմտյան փորձի փոխանակության համար:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ պայմանագրում նախատեսված է, որ Խորհրդատուն պետք է իրականացնի երեք վերապատրաստման դասընթացներ, որին կմասնակցեն կոնսորցիումի հայկական կողմի ներկայացուցիչները, ինչպես նաև կապալառուների ներկայացուցիչները: Բացի այդ նշվեց, որ համաձայն ներկայացված տեխնիկական առաջարկի, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական առաջադրանքի՝ Խորհրդատուն պարտավորվում է ութսուն (80) մարդ/ամիս ապահովել արտասահմանյան խորհրդատուների առկայությունը և տեխնիկական վերահսկողությունը իրականացվելու է համատեղ տեղացի և միջազգային մասնագետների կողմից:

Ներսես Երիցյանը բարձր գնահատեց “տեղում” ուսուցման և համատեղ վերահսկողություն իրականացնելու գաղափարը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Տեխնիկական վերահսկողության իրականացման պայմանագրի նախագիծը:

Մինչ օրակարգի հաջորդ հարցին անցնելը Արա Հովսեփյանը հայտնեց, որ կառավարման խորհրդի տվյալ նիստում, որպես դիտորդ, ներկա է նաև ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան տիկին Մարի Յովանովիչը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե հնարավոր է արդյո՞ք, որ մրցույթի արդյունքում փոխվի ՀՄՀ-Հայաստան ծրագրի աուդիտն իրականացնող կազմակերպությունը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ մրցույթը լինելու է փակ կանոններով, այն է՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության գլխավոր տեսուչի գրասենյակի կողմից ընդունելի աուդիտորական կազմակերպությունները միայն կարող են մասնակցել այս մրցույթին: Ներկայումս դրանք երկուսն են մեր տարածաշրջանում, սակայն ՀՄՀ-Հայաստանն արդեն իսկ դիմել է գլխավոր տեսուչի գրասենյակին ևս երկու՝ Էրնստ ընդ Յանգ և Փրայս Վոթեր Հաուս Քուուփեր ընկերությունների ընդունելիության հարցը ուսումնասիրելու համար:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ կան մի քանի հայկական աուդիտորական ընկերություններ, որոնք բավականին բարձր որակավորում և աշխատանքային փորձ ունեն և նպատակահարմար կլիներ նաև ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության գլխավոր տեսուչի գրասենյակի ուշադրությունը հրավիրել նաև վերջիններիս վրա: Մասնավորապես նշվեց Ամերիա Աուդիտ ընկերության մասին:

Տիգրան Դավթյանը հարցրեց, թե արդյո՞ք հայտնի են այն չափանիշները, որոնց հիման վրա կատարվում է ընկերությունների ընտրությունը գլխավոր տեսուչի գրասենյակի կողմից:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ այդ չափանիշները ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին հայտնի չեն, սակայն հայտնի է, որ գլխավոր տեսուչի գրասենյակի ներկայացուցիչները մինչև ՀՄՀ-Հայաստան ծրագրի մեկնարկը տեղում ուսումնասիրել են աուդիտորական ընկերությունները և առաջարկել երկու ընկերություն:

ՀՀ Վարչապետն առաջարկեց վերցնել Համաշխարհային Բանկի կողմից ընդունելի աուդիտորական ընկերությունների ցուցակը և առաջարկել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության գլխավոր տեսուչի գրասենյակին՝ նույնպես ընդգրկելու կարճ ցուցակի մեջ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի աուդիտի պլանը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ՀՀ ֆինանսների նախարարության Գյուղական ֆինանսավորման կառույց ՕԻԳ-ն (այսուհետև՝ ԳՖԿ) ինչպե՞ս է բաշխում ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում վարկավորման համար նախատեսված գումարը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ գումարների տեղաբաշխումն իրականացվում է բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով՝ համաձայն ներկայացված «Վարկային ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցի և վարկային պայմանագրերի:

ՀՀ Վարչապետը հետաքրքրվեց, թե ի՞նչ սկզբունքով են ընտրվելու այդ բանկերն ու վարկային կազմակերպությունները:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ բոլոր բանկերն ու վարկային կազմակերպությունները, որոնք ցանկություն կհայտնեն մասնակցելու և կհամապատասխանեն ՀՄՀ-Հայաստանի ներկայացրած պահանջներին, հնարավորություն կունենան ստանալու գումարներ՝ գյուղատնտեսության վարկավորման համար: Կազմակերպությունները նախ պետք է ներկայացնեն իրենց հետաքրքրության հայտերը, որից հետո ՀՄՀ-Հայաստանը կուսումնասիրի հայտերը, ներառյալ աուդիտորական ստուգումները և եռամսյակային հաշվետվությունները, և կկազմի այն հաստատությունների ցուցակը, որոնք համապատասխանում են սահմանված չափանիշներին: Այնուհետև այդ ցուցակը կներկայացվի Հայաստանի Կենտրոնական բանկին՝ ֆինանսական հաստատությունները լիցենզավորված լինելու փաստի և Կենտրոնական բանկի պահանջներին համապատասխանության հաստատումը ստանալու համար:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ինչպե՞ս է որոշվելու, արդյո՞ք այդ բանկերն ունեն անհրաժեշտ հմտություններ տվյալ ծրագրի իրականացման համար և ո՞վ է գնահատելու այս կամ այն վարկառուին վարկի տրամադրման ռիսկերը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ այդ գնահատումը կատարվելու է ԳՖԿ-ի կողմից, իսկ վարկավորման ռիսկերի գնահատումն արվելու է վարկը տրամադրող բանկի կողմից: Միաժամանակ ներկայացվեց, որ վարկային ծրագրի նպատակներից մեկն է նաև խրախուսել բանկերին և վարկային կազմակերպություններին մտնել գյուղատնտեսության վարկավորման ոլորտ: Օրինակ՝ վարկային բաղադրիչի առաջին փուլի իրականացման փուլին մասնակցել է նաև Հայբիզնեսբանկը, որը մինչ այդ գյուղատնտեսության վարկավորման ոլորտում աշխատանքային փորձ չուներ, իսկ ներկայումս այդ փորձը բավականին հաջող արդյունքի է բերել:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե արդյո՞ք յուրաքանչյուր գյուղացի, ով ցանկանում է վարկ ստանալ, պարտավոր է ներկայացնել բիզնես պլան:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ գյուղացիները Ջրից դեպի Շուկա ծրագրի շրջանակներում իրականացվող ուսուցումների ընթացքում տեղեկանում են վարկային ծրագրի մասին: Այնուհետև՝ հետաքրքրություն առաջանալու դեպքում ընտրում են համապատասխան վարկային հաստատությունը: Ընդհանուր առմամբ Ջրից դեպի Շուկա ծրագիրն ունի երկու ուղղություն՝ օժանդակություն վարկառուներին և բանկերի ու վարկային կազմակերպությունների կարողությունների ամրապնդում:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ փաստորեն այս կարգով սահմանափակվում է վարկ ստանալու հնարավորություն ունեցող անձանց շրջանակը, քանի որ տվյալ պարագայում վարկի համար կարող են դիմել բացառապես այն գյուղացիներն, ովքեր մասնակցել են ՀՄՀ-Հայաստանի կողմից կազմակերպված ուսուցումներին:

Արա Հովսեփյանը հաստատեց այդ փաստը, մեջբերելով նաև, որ ի սկզբանե դա էլ հենց հանդիսացել է այս ծրագրի նպատակը՝ կազմակերպել ուսուցումներ, գյուղացիներին փոխանցել ջրի կառավարման և բարձրարժեք գյուղատնտեսության անցման համար անհրաժեշտ հմտություններ և տրամադրել երկարաժամկետ վարկեր այդ ծրագրերն կյանքի կոչելու համար: Առ այսօր վարկեր են ստացել մոտ 130 գյուղացիներ:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ներկայումս ՀՄՀ-Հայաստանի հետ աշխատող 4 վարկատու կազմակերպություններն ի՞նչ սկզբունքով են ընտրվել:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ վարկային ծրագրի առաջին փուլի իրականացման համար կազմակերպվել է հոլանդական աճուրդ և պայմանագրերը շնորհվել են ամենացածր տոկոս առաջարկած վարկատուներին: Այդ սկզբունքով ամենաբարձր վարկային տոկոսը կազմել է 11,5%:

Արամայիս Գրիգորյանն առաջարկեց ավելի նեղացնել վարկավորման շրջանակը և վարկը տրամադրել բացառապես մեկ նպատակի իրականացման համար:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ արդեն իսկ տվյալ վարկերի հնարավոր կիրառման շրջանակը բավականին նեղացվել է և այն միտված է բացառապես Ջրից դեպի Շուկա ծրագրի նպատակների իրականացմանը:

ՀՀ Վարչապետը մեջբերեց, որ ընդունում է այն փաստը, որ Ջրից դպեի Շուկա ծրագիրը համալիր ծրագիր է, և ՀՄՀ-Հայաստանը փորձում է այն պահել համալիր և չհանել այդ ծրագրի բաղկացուցիչ մասը համդիսացող վարկային բաղադրիչը:

Անդրանիկ Անդրեասյանն առաջարկեց այս վարկերը տալ բացառապես այն տարածաշրջաններում, որտեղ ջրի գերծախս է լինում և պարտադիր պայման նախատեսել, որ տվյալ տարածքի գյուղացիները պետք է կիրառեն ոռոգման նորագույն տեխնոլոգիաները, որը հնարավորություն կտա խնայել ջուրը: Նշվեց նաև, որ կարելի է այս գումարը բաշխել որպես աջակցություն տվյալ գյուղացիներին:

Արմեն Գևորգյանն առաջարկեց որպես վարկի ստացման համար անհրաժեշտ չափանիշ սահմանել այն, որ գյուղացին պարտավոր է պետության առջև հողի հարկի մասով որևէ հարկային պարտավորություններ չունենալ:

Անդրանիկ Անդրեասյանն էլ առաջարկեց վերջինիս ավելացնել նաև օգտագործված ոռոգման ջրի համար մարված պարտավորությունների պարտադիր պահանջը:

Վիկտոր Ենգիբարյանը ներկաներին տեղեկացրեց, որ այս հարցը բավականին երկար քննարկվել է ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի կողմից: Ըստ էության ուսուցում անցած գյուղացիների միայն 5-10%-ն է նմանատիպ ուսուցումներից հետո մտադրվում փոխել իր բիզնեսի իրականացման ընթացքը և այս գումարն էապես կօգնի նրանց կատարելու այդ անցումը: Տվյալ դեպքում գյուղական բիզնեսի ընդլայնումը փոքրիկ, բայց կայուն քայլ է դեպի առաջ:

Կարեն Զադոյանը հայտնեց, որ համամիտ չէ այն կարծիքի հետ, որ հարկային պարտավորությունների առկայությունը պետք է հիմք հանդիսանա վարկի տրամադրումը մերժելու համար, ավելացնելով, որ խոսքը չի գնում հարկերը չմուծելու մասին, այլ պարզապես առաջարկվում է այն չկապել տվյալ ծրագրի հետ: Նա միաժամանակ հարցրեց, թե ինչու՞ է վարկավորման տոկոսն ավելացել:

Արմեն Գևորգյանն առարկեց՝ նշելով, որ անցյալ տարի գյուղական բնակչության միայն 66%-ն է կատարել հողի հարկի մասով իր հարկային պարտավորությունները. այն նույն համայնքի առջև, որում վերջիններս բնակվում են և որի պահպանության և բարեկարգման համար պետք է կիրառվեն այդ միջոցները:

Արա Հովսեփյանն էլ պարզաբանեց, որ վարկավորման տոկոսն էականորոն չի ավելացել. նախկինում այդ տոկոսի առավելագույն սանդղակը 11,5% էր, իսկ հիմա՝ 12%:

Ներսես Երիցյանը հայտնեց, որ նոր տեխնոլոգիաների փոխանցման համար մասշտաբ է պետք, ուստի կարելի է նաև այդ տիպի կոմպոնենտ ևս ավելացնել:

ՀՀ Վարչապետը հավելեց, որ կարելի է անգամ բեկումնային փոփոխություն կատարել և վարկավորման համար նախատեսված միջոցները կիրառել այլ ոլորտում:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ այդ տարբերակը ևս ուսումնասիրվել է. նախ նեղացվել են վարկավորման ընդունելի ոլորտները, հետո ուսումնասիրվել է տվյալ գումարներն այլ ոլորտ տեղափոխելու հարցը, սակայն պարզ է դարձել, որ այդ մոտեցումն արդարացված չէ, քանի որ վտանգվում է Զրից դեպի Շուկա ծրագրի արդյունավետությունը:

Արման Ոսկանյանը նշեց, որ չնայած այն հանգամանքին, որ ըստ էության Զրից դեպի Շուկա ծրագրի շրջանակներում վարկավորման բավականին բարդ մեխանիզմ է կիրառվում, այնուամենայնիվ տվյալ վարկերը ցածրատոկոս են, ուստի և գրավիչ շատ ֆերմերների համար: Միաժամանակ նշվեց, որ տվյալ հարցը երկար քննարկվել է ՇԽ նիստում, տարբեր կարծիքներ են հայտնվել, բայց այնուամենայնիվ հաղթել է այն կարծիքը, որ անհրաժեշտ է վարկային կոմպոնենտը թողնել ծրագրում:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ որպես միակ կոմպրոմիսային տարբերակ կարելի է դիտել այն, որ տվյալ բաղադրիչը մնա ծրագրում, սակայն վարկի ստացման նախապայմաններում ավելացվի հարկային պարտավորությունների մարման պայմանը:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Զրից դեպի շուկա բաղադրիչի «Վարկային ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցը՝ որպես վարկավորման նախապայման ավելացնելով հողի հարկի և ոռոգման ջրի վճարների մասով պարտավորությունների բացակայության պահանջը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե ինչի՞ համար է ձեռք բերվում ավտոմեքենան:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում մեկնարկել են շինարարական աշխատանքները և շինարարական սեզոնի ընթացքում նախատեսվում է իրականացնել բազմաթիվ այցելություններ շինարարական հրապարակներ, ուստի առկա ամտոմեքենաները բավարար չեն:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց ավտոմեքենայի գնումը հետաձգել մինչև մարտ ամիս՝ ՀՄԿ-ի հաջորդ հատկացումը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի փոփոխված գնումների պլանը՝ մինչև մարտ ամիս հետաձգելով ավտոմեքենայի գնումը:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե ինչպիսի՞ն է կատարված շինարարական աշխատանքների որակը:

Գուրգեն Սարգսյանը պարզաբանեց, որ և՛ շինարարության, և՛ տեխնիկական վերահսկողության որակը բավականին բարձր է: Ընդհանուր առմամբ ճանապարհը որակյալ է:

Արա Հովսեփյանը ներկաներին տեղեկացրեց, որ ճանապարհների ընդունման պետական հանձնաժողովի կազմում ընդգրկված է եղել նաև ՇԽ ներկայացուցիչ Պողոս Շահինյանը:

Պողոս Շահինյանը հայտնեց, որ մասնակցել է ճանապարհների ընդունման գործընթացին և միանշանակ դրական է գնահատում կատարված աշխատանքի որակը: Դրական է նաև այն հանգամանքը, որ համագործակցություն է եղել Լինսի հիմնադրամի հետ: Սակայն որակից բացի անհրաժեշտ է չմոռանալ նաև ճանապարհային անվտանգության մասին: Տարեկան կտրվածքով մոտ 100 մլն. ՀՀ դրամ է գնահատվում ավտովթարներից մահացության, ծանր և թեթև վնասվածքների ելքով ճանապարհատրանտսպորտային պատահարների ընդհանուր վնասը: Ընդ որում տվյալ գնահատումը կատարվում է հաշվի առնելով յուրաքանչյուր անհատի սոցիալական ներդրումը, որը վերջինս կարող էր ունենալ կյանքի ընթացքում: Ներկայումս անվտանգության խնդիրը շատ սուր է դրված և տվյալ խնդրի լուծման համար մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության և քաղաք Երևանի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարություն և հինգ տարվա գործողությունների ծրագիր» փաստաթուղթը, որի իրականացման համար անհրաժեշտ է 10մլն. ԱՄՆ դոլար:

Արման Ոսկանյանը նշեց, որ անվտանգության ապահովման խնդիրն իրոք հրատապ է, քանի որ ներկայումս լայնածավալ ճանապարհաշինություն է իրականացվում, որից էլ բխում է, որ լավ ճանապարհների առկայության և ճանապարհային անվտանգության կանոնները չպահպանելու դեպքում մահացության թիվն էլ ավելի կաճի:

ՀՀ Վարչապետը նշեց, որ ավտովթարների հետևանքով մահացության թիվը հիրավի մեծ է և մտահոգիչ, միաժամանակ հայտնելով իր հետաքրքրությունը կապված Պողոս Շահինյանի ներկայացրած տեղեկատվության հետ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարեց Պողոս Շահինյանին ՀՀ Կառավարություն ներկայացնել տեղեկատվություն բարձրաձայնված ճանապարհային երթևեկության անվտանգության խնդիրների վերաբերյալ:

Գուրգեն Սարգսյանը տեղեկացրեց, որ առկա է համապատասխան գործողությունների պլան և ներկայումս կառավարությունը սպասում է Համաշխարհային Բանկի կողմից դրամաշնորհի

տրամադրմանը, որը հնարավորություն կտա իրականացնել պլանով նախատեսված միջոցառումները:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում շինարարական աշխատանքներն ավարտված և շահագործման հանձնված ճանապարհահատվածների վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 6-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ այս հարցի վերաբերյալ առկա ընթացակարգային խնդիրներն արդեն իսկ քննարկվել են, պայմանագիրը տիպային է և անհրաժեշտ է հնավորինս շուտ սկսել նախատեսված աշխատանքները:

Միաձայն որոշվեց՝ հաստատել «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-08/001 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

Այլ հարցերի շրջանակում Գուրգեն Սարգսյանը տեղեկացրեց, որ 2009թ. հունվարի 1-ից ավելացվել է Հայավտոճան ՊՈԱԿ-ի ՀՀ պետական բյուջեից, Համաշխարհային Բանկի ծրագրերից և Ասիական Զարգացման Բանկի ծրագրերից ֆինանսավորվող աշխատակիցների աշխատավարձերը: Ընդ որում խոսքը գնում է ընդհանուրը ամսական մոտ 400,000 ՀՀ դրամի մասին: Հաշվի առնելով այդ հանգամանքը, անհրաժեշտ է նաև համապատասխանաբար վերանայել Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան ծրագրի միջոցներից ֆինանսավորվող աշխատակիցների աշխատավարձերը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ տվյալ հարցը քննարկվել է ՀՄԿ-ի հետ և վերջիններիս կողմից առաջարկվել է այս հարցի դրական լուծումը հետաձգել:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը դրական արտահայտվեց այս հարցի կապակցությամբ՝ նշելով, որ նպատակահարմար է, որպեսզի նույնատիպ որակավորում ունեցող և նույն պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները ստանան հավասարաչափ աշխատավարձ:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին միջոցներ տրամադրել՝ Հայավտոճան ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակիցների աշխատավարձերի բարձրացման համար:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը